ԹԵՄԱ 6

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 6.1 Աշխարհի բնակչության թիվը և շարժը

1. Բնակչության տարբեր հարցերի ուսումնասիրությամբ զբաղվում են շատ գիտություններ՝ ժողովրդագրությունը, սոցիոլոգիան, ազգագրությունը, լեզվաբանությունը, միգրացիայի աշխարհագրությունը, բարբառագիտությունը, քաղաքաշինությունը և, իհարկե, առանձնահատուկ տեղ է գրավում աշխարհագրությունը:

Աշխարհագրությունն ուսումնասիրում է բնակչության և բնակավայրերի կազմի, զարգացման ու տեղաբաշխման առանձնահատկությունները տարբեր սոցիալական, տնտեսական, պատմական և բնական պայմաններում:

2. Տնտեսական առաջընթացը նպաստեց առողջապահության մակարդակի բարձրացմանը, ինչի շնորհիվ ավելացավ ծնելիությունը, կրճատվեց մահացությունը: Այսպես, եթե XVIII–XIX դարերում աշխարհի բնակչությունը տարեկան ավելանում էր 8–10 մլն-ով, ապա ներկայումս՝ 80–85 մլն-ով (միջին հաշվով ծնվում է 130 մլն, մահանում է՝ 50 մլն մարդ): XX դարի երկրորդ կեսին աշխարհի (1950–1970-ականներին) բնակչության բուռն աճը հանգեցրեց ***ժողովրդագրական պայթյունի***, որը հատուկ էր Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի նորանկախ երկրներին: